

իրենց վարձքն ալ ունին . այսինքն կեանք
կը կարճեցնեն . ան ատեն շուտով նո-
րէն զիրար կը գտնէինք , և յաւիտեան
մեզմէ առաջ գացող սուրբերուն մէջ
կ'ըլլայինք , զորոնք դեռ կ'ողբաս , անոնք
հոն ամէնքն ալ երանութեան մէջ են :
Ա՛հ , սիրելի մայր իմ , այդ ինչ էր ը-
րածդ : Ամանակին բեռովը նորէն
հոգիս ծանրացուցիր . ո՛հ տէր , օր մը
ամբողջ եթերական զգեստը հագնե-
լէն վերջը , ինչպէս այս ծանրութեանս
պիտի կարենամ տանել :

— Մարիամ , պատասխանեց Սառա ,
սիրտս կտոր կտոր կ'ընես :

Անաստասիա լուռ տեղէն կ'ելլէ և
անշարժ երկինք տեսնող աղջկան վրայ
կը նայի , ու քանի մը վայրկեանէն վեր-
ջը , բոլորովին վերացած , պոռաց .

— Անաս բարով Մարիամ . Անտիոք
քաղաքը հալածանքը սաստկացեր է ,
ես կը վազեմ մարտիրոս ըլլալու :

— Գնա , ըսաւ Մարիամ , ես քու
լուսափայլ աթոռդ տեսայ , ուսկից մայր
մը չգրկեր զքեզ :

— Մարիամ , Մարիամ , պոռաց Սա-
ռա , կ'ուզե՞ս մեռցնել զիս :

Մարիամ թւերը բացած Սառային
պլլուեցաւ ու սկսաւ լալ :

— Մտիկ ըրէ ինծի , ըսաւ մայրը
բաւական ատեն լուռ կենալէն վերջը ,
քեզի այնպիսի վայելքներ պատրաս-
տուած են , որ դու դեռ չես գիտեր :
Առաւել , քու սիրականդ ու դեռահա-
սակ նշանածդ քիչ ատենէն իր երկար
ճամբորդութենէն կը դառնայ : Դու
զինքը կը սիրէիր . ինքն ալ այս վերջին
զատկի տօներուն քու գեղեցկութիւնդ
տեսած ըլլալով , սիրտը քեզի հետ կա-
պուեցաւ , զքեզ անոր պիտի տամ . դու
պիտի ըլլաս երջանիկ ամուսին մը , եր-
ջանիկ մայր մը . դու դեռ չես գիտեր
մօր մը ուրախութիւնը երբ իր առաջին
զաւակը գրկացը մէջ կը գգուէ . դու
ալ կ'իմանաս , ու կը տեսնաս որ երկրիս
վրայ ալ կայ երջանկութիւն մը , որ թէ
որ երկնքէն եկած չըլլար , նոյն իսկ
երկնից ալ նախանձելի կ'ըլլար :

— Հանդարտէ , սիրելի մայր իմ ,

քաղցրութեամբ մը պատասխանեց Սա-
ռիամ . ականջներս դեռ կը խօսին այն
հրեշտակաց ձայնովը . ընդհակառակն
երկրիս աղաղակը , ո՛հ տէր , կը խլացը-
նեն զիս :

Այս ըսելով երկուքն ալ իրարու սրէ-
լուած , լուռ կեցան ու լացին :

Երկրորդ օրը Սառայի բարեկամնե-
րը և Մարեմայ ընկեր օրիորդներն ե-
կան որ ուրախակցութիւն ընեն : Այս
հրաշքին համբաւը բոլոր չորս դին տա-
րածուած էր , և ամէնքն ալ այս հրա-
շից տունը կը վազէին :

Մայրը շնորհակալութեան երգեր
երկինք կը վերացնէր ; բայց աչուրներն
արտասուաց մէջ կը լուղէին : Արեմն
երկրաւոր ուրախութիւնները ցաւոց
հետ խառն պիտի ըլլան :


Մարիամայ երեսին վրայ պարզու-
թիւն մը եկեր էր . գեղեցիկ ու խաղաղ
էր , նման սրբուհւոյ մը Աստուծոյ կա-
մացը համակերպեալ : Ինքն ալ Աստու-
ծոյ օրհնութիւններ կ'երգէր , բայց եր-
բեմն երբեմն երկայն ատեն կը յափըշ-
տակուէր : Աչքերն ու հոգին առ Աս-
տուած կը վերանային . քաղցր թմբու-
թեան մէջ ընկղմած կ'երևար , ու երբ-
որ կ'արթննար , մեղմ ձայնով կը մըր-
մընջէր շունչը խեղդելով . — Ա՛հ տէր ,
արդեօք դեռ որչափ պիտի տւէ այս
պանդխտութիւնս : . . .

կը շարունակուի :

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ագրականդ :

Սիրակուսայի Ագրականդ քաղաքը՝
համանուն լեռան վրայ շինուած է՝ Հը-
ռողացւոյ մը ձեռքով , ինչպէս Պոլիբիոս
կը վկայէ . իսկ Ստրաբոն կ'աւանդէ թէ
Հոնիացւոց գաղթականութիւն մը կան-
գնած ըլլայ Սիրակուսայի շինութենէն
գրեթէ հարիւր ութսուն տարի ետքը :
Իսկ Աուկիդիտէս ալ կ'ըսէ թէ Վելա
քաղաքէն եկած գաղթականք շինած ըլ



Միաբանութեան տաճար յԱգրականդ .

լան զԱգրականդ , որ նախ միապետական կառավարութիւն ունեցաւ և ետքն ալ հասարակապետական :

Ագրականդ քաղաքին հարստութեանը գաղափար մը տալու համար՝ հետևեալ դէպքը մէջ բերենք՝ զոր Վիոգորոս սիկիլիացի կ'աւանդէ : Երբոր Ագենատէս ագրականդացին՝ ողիմպիական մրցանաց մէջ կտրիճ դառնուեցաւ , յաղթանակաւ իր հայրենիքը մտնելու ատեն՝ փառաւոր կառքի մը վրայ նստեր էր , և հետն ալ ուրիշ երեք հարիւր կառք՝ ճերմակ ձիերէ ձգուած : Այն կառքերուն մէջ նստող պատանիները՝ ոսկեճամուկ և արծաթի թելերով բանուած զգեստներ հագած էին , և կարգէ դուրս հարստութիւն կ'երևնար վրանին : Քաղաքին դռնէն ներս որ մըտան , Վելիաս՝ տեղացի հարուստներէն մէկը , զանոնք ամէնքը իր տունը հրաւիրեց , և անոնց փառաւոր հացկերոյթ մը տալով՝ բազմաթիւ ծառաները քաղաքին այլ և այլ կողմանքը խրկեց՝ որպէս զի նոյն օրը Ագրականդ հասնող օտարականքը իր տունը հրաւիրեն , և

արժանաւոր մեծարանքը ընեն անոնց :

Ագրականդ քաղաքին առջի տիրողները կարբեդոնացիք եղան : Անիբաղ քաղաքին ամրութիւնը տեսնելով՝ իմացաւ թէ միայն մէկ կողմանէ կրնար տիրել եթէ իր ամէն ուժը հոն թափէ . ուստի մէկէն քաղաքին պարսպացը հաւասար բարձրութեւ տեղեր շինեց , և այս վախճանաւ՝ Ագրականդի չորս կողմը եղած գերեզմաններուն քարերը գործածեց : Սակայն հազիւ թէ շէնքը լմնցնելու վրայ էր , դժնդակ ախտ մը զօրաց մէջ երևնալով , անոնցմէ շատը մեռան : Կարբեդոնացիք կարծեցին թէ այս աղէտքս՝ աստուածոց պատիժ մըն էր , իրենց մեռելոց դէմ ըրած անիրաւութեան վրէժը խնդրելու . վասն զի ամէն գիշեր անոնց ստուերքը կը կարծէին տեսնել : Ստտի մնացած գերեզմաններուն չդպան , և իրենց յանցանացը քաւութիւն գտնելու համար՝ Սատուռոսի տղայ մը զոհեցին , և ի պատիւ Պիսիդոնի ուրիշ այլ և այլ զոհեր ձգեցին ծովուն մէջ :

Քաղաքացիք՝ որ առջի բերան իրենց

քանի մը յաջողութիւններովը սիրտ առեր էին, սովէն նեղուելով և ուրիշ տեղէ մըն ալ օգնութեան յոյս չունենալով՝ որոշեցին քաղաքը ձգել փախչիլ։ Իրենց այս մտածման գործադրութիւնը՝ հետևեալ գիշերուան մէջ պիտի ընէին։ Իսկ ինչ է երևակայելը թէ որ պիտի ցաւ եղած պիտի ըլլայ ժողովրդեան մը համար իր տունը, ունեցածը չունեցածը և հայրենիքը թողուլ։ Կարգէ դուրս սրտաշարժ տեսարան մըն էր՝ արտասուող կանանց խումբ մը նկատել, որ իրենց խեղճ տղայոց ձեռքէն բռնած՝ բարբարոս յաղթողի մը գազանային բարկութենէն փախչել կը ջանային։ Բայց ասկէ աւելի դժնդակ հարկ մըն ալ կար՝ քաղաքին մէջ թողուլ ծերերն ու հիւանդները՝ որոնց համար փախուստն անկարելի էր։ Եւ ինչ որ տարագրեալքը Իսլա հասան, ճամբուն վրայ ամենէն մօտ քաղաքը, և հոն իրենց ողորմ վիճակին ամէն հարկաւոր սփոփանքը գտան։

Եւ ինչ միջոցին Լամիկոն պարսպէն ներս կը մտնէր, ամէն ձեռքն ընկածները ըստ պաննելով։ Հարուստ աւար մը կարգէ դոնացւոց ձեռքն ընկաւ. վասն զի Լ. գրականդ՝ Սիկիլիոյ ճոխագոյն քաղաքաց մէկն էր, երկու հարիւր հազար բնակչօք, և իր հիմնարկութենէն ի վեր ոչ երբէք թշնամեաց ձեռքն ինկեր էր։ Եւ ատ մը պատկերներ, անօթք և արձաններ գտնուեցան, և Փալարիսի հռչակաւոր ցուլը՝ զոր ի Կարքեդոն խրկեցին՝։

Եւ ամանակ անցնելէն ետքը հռովմայեցիք տիրեցին քաղաքին, և տեղւոյն նշանաւոր անձինքը գաւազանաւ ծեծելէն ետքը՝ բդեշխին հրամանաւ անոնց

1 Լ. գրականդ քաղաքին բռնաւոր մըն էր Փալարիս կրետացին, որ Քրիստոսէ 566 տարի առաջ տասնըվեց տարի, կամ ըստ այլոց երեսուն տարի իշխեց։ Իր անգթութեամբը ատելի ըլլալով հպատակացը՝ անոնցմէ քարկոծուեցաւ, ինչպէս ոմանք կ'աւանդեն։ Պերիլլոս ճարտար մեքենագէտ մը ընծայ ըրաւ իրեն սղնձէ հռչակաւոր ցուլը՝ դատապարտեալքը մէջը ձգելու և կրակով այրելու համար։ Սիրով ընդունեցաւ Փալարիս, և առաջին փորձը նոյն իսկ Պերիլլոսի վրայ ըրաւ։

գլուխը կտրեցին, և հասարակ ժողովուրդն ալ գերի բռնելով՝ աւելի ստակ տուողին վաճառեցին։ Եւ նկէ ետքը քիչ անգամ Լ. գրականդ քաղաքին վրայ յիշատակութիւն կ'ըլլայ պատմութեանց մէջ, և որոշ չգիտցուիր թէ երբ հին քաղաքը կործանելով՝ անոր տեղ նորը շինուեցաւ, որ հիմայ Նիրճենթի կը կոչուի։

Հնոց մէջ Լ. գրականդ քաղաքը նշանաւոր էր իր հիւրասիրութեանը, ճոխութեանը և բնակչաց շուայութեանը համար. բայց ասոնցմէ ալ աւելի նշանաւոր էին իր հոյակապ շէնքերը, որոնց մէջ գլխաւոր կրնայ սեպուիլ Հերայի տաճարը, որ գեղեցիկ նկարներովը հնոց մէջ միակ կը սեպուէր, և պատմիչք մեծ գովութեամբ կը յիշատակեն։ Օ եւս՝ անուանի նկարիչը, միտքը դրած էր իրմէն առաջ եղող ամէն արուեստագէտքը գերազանցել, և մարդկային հանճարոյ կատարելութեան գաղափար մը աշխարհի ընծայել։ Եւ յիշատակութեան Լ. գրականդ քաղաքին մէջ եղող կանանց մէջ՝ հինգ աւելի վայելչագէտքը ընտրեց, և անոնց ամենուն գեղեցկութիւնը մէկ պատկերի վրայ ժողովելով՝ Հերայի պատկերը ձևացուց։ Եւ նկարը՝ իր երկասիրութեանց մէջ գլուխ գործոց կը սեպուէր, բայց կարգեդոնացւոց քաղաքին տիրելու ժամանակ՝ այն պատկերն ալ կրակի տրուեցաւ։ Եւ ասն զի պաշարման ատեն բռնակիչներէն շատը նոյն տաճարին մէջ ապաւինեցան, ազատութեան հանգիստ տեղ մը սեպելով. բայց երբ տեսան թէ թշնամիք դուռը հասեր են, մէկէն կրակ տուին, աւելի ընտրելով բոցոյն մէջ մեռնիլ՝ քան թէ յաղթողին իշխանութեան տակն իյնալ։ Հերակլեսի տաճարին մէջ՝ Օ եւսի մէկ ուրիշ նրկարն ալ կար, յորում ձևացուցած էր նոյն աստուծոյն՝ խանձարրոց մէջ եղած ատեն երկու օձեր խղդելը։ Պլինիոս կ'ըսէ թէ նկարիչը իր այս աշխատասիրութեան արժանի գին մը չկարենալով կտրել՝ քաղաքացւոց ընծայ ըրաւ, ու զելով որ Հերակլեսի տաճարին մէջ դրուի։

Վորացի ճարտարապետութեամբ շինուած տաճար մըն էր նաև Միաբանութեան կոչուածը, որն որ մեր դրած պատկերին մէջ կ'երևնայ : Բայց անկէ շատ աւելի մեծագործ շէնք մըն էր՝ Ուիմպեան Բրամադդայ տաճարը, որ երեք հարիւր քառասուն ոտք երկայնութիւն ունէր, վաթսուն լայնութիւն և հարիւր քսան՝ բարձրութիւն : Վեղեցիկ ախորժակով և արուեստիւ շինուած էին իր սիւները, գաւիթները և շէնքին ամբողջութիւնը : Տաճարին արևելեան կողմը նայող պատին վրայ Հսկայից պատերազմը ձևացուցած էր, և արևմտեանին վրայ ալ՝ տրովական մարտը, ճիշտ այն կերպով՝ ինչպէս կը ստորա-

գրէ Սիրգիլիոս՝ Հերայի տաճարին մէջ եղածը՝ ի Վարքեդոն : Վիոգորոս սիկիլիացի այս տաճարին գեղեցկութիւնը, համեմատութիւնը և արուեստը գովելէն ետքը՝ կ'ըսէ թէ անոր շէնքը անկատար մնաց :

Հռչակաւորն Եմպեդոկլէս այս քաղաքին մէջ ծնած է, և իր հանճարովը և ուսմամբ՝ պարծանք իր հայրենեացը : Եւանոթ է իր խօսքը՝ քաղաքակցացը համար, թէ Բարականդացիք անանկ կը վատենն դրամը՝ իբրև թէ ամենևին լմբնալիք չունի, և այնպիսի մեծագործ և հաստատուն շէնքեր կը շինեն, որ կարծես թէ անոնց մէջ մշտնջենաւոր կեանք մը պիտի անցընեն :

Հ Ն Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Ճանապարհորդութիւն Պողիկտետի ի Հաովմ¹ :

ԹՈՒՂԹ Զ.

(Շարունակութիւն)

Վիմինալ և Կելեան լեռանց մէջ տեղն է Եսկուիլեան լեռը, որ ամենէն ընդարձակն է : Վերջապէս անմիջապէս քովդ Տիբեր գետին անդին դէս ի աջակողմը Աւենտին լեռն է, որ Աւենտինոս Սիլվիոս Աքայեցւոց թագաւորին անուամբը կոչուած է, և որուն գերեզմանը դեռ կը տեսնուի : Հոն էր ուր Հռեմոս անյաջող գուշակութիւններ առեր էր, երբ իր եղբորը հետ նոր հիմնած քաղաքին անուանակոչութեանը վրայօք վէճի եկաւ : Հռովմայեցիք երկայն ատեն չարագուշակ համարեցան այն տեղը ուր որ այս դիպուածը հանդիպեր էր, երբ Անկոս Մարտիոս թագաւորը լատինաց յաղթելով՝ այն տեղը իրենց բնակութիւն տուաւ : Ուրիշ շատ մահարձաններէ զատ կը տեսնես հոն Անահտայ և Յաղթութեան տաճարները : Աւենտին և Կապիտոլեան լեռանց մէջտեղը տեսն մը Վէլապո ըսուած խորունկ ճահիճ մը կար, ուսկից նաւակով կ'անցնէին, լեռնէ լեռ երթալու համար : Տարկուինոսի Երիցուն ատեն, որուն թագաւորութիւնը այնչափ օգտակար աշխատութիւններով նշանաւոր եղաւ, այս ճահիճն ալ չորցուցին : Հիմա այն միջոցին մէջ երկու գեղեցիկ ճամ-

բաներ կան և խոր ու մեծ Վէլապո կը կոչուին : Հոն է գլխաւորապէս ձէթ ծախողներուն բնակարանը :

Ամուր պարիսպ մը լայն խրամով մը հանդերձ, որուն երկու ծայրերը ի Տիբեր կը լմբնան, այս եօթը լեռները կը պատէ, բաց ի Կապիտոլեան լեռնէն՝ որուն մէկ մասը միայն կ'ամփոփէ, նաև բերդին պարիսպներն ալ որ այս կողմէն քաղաքը կը սահմանեն : Այս փակը գրեթէ վեց Հռոմէական մղոնի շրջապատ ունի, որ մեր քառասունըութ սղատին կը համապատասխանէ, չսեպելով Յանիկուլոնը որն որ իբր քաղաքին յաւելուած մը կրնայ սեպուիլ : Աթէնք ալ գրեթէ նոյնչափ տարածութիւն ունի. բայց բոլորովին փակուած է իր շրջապատին մէջ, ուր Հռոմայ սահմանները անորոշ կրնան սեպուիլ : Կրօնական յարգութեամբ մը՝ Հռովմայեցիք ոչ երբեք ուղեցին իրենց հիմնադիրներուն դրած սահմանները ընդարձակել. այլ անցեր են զանոնք : Ինչպէս ոգիք մը որ խմորելով կ'եռայ, և առատանալով՝ ամանին մէջ չկրնար ամփոփուիլ, ասանկ ալ Հռովմայեցիք կամաց կամաց իրենց նախնական սահմաններէն անդին անցան :

Ո՛ր կողմէն ալ աչքդ դարձնես՝ ուրիշ բան չես տեսնար՝ բայց եթէ ճոխ տուններ, և փառաւոր պարտէզներ : Հռովմայ շրջակայքը զբօսանաց տներով կը ծածկուին, և քիչ ատենէն քաղաք պիտի գառնան : Հռովմայեցւոց գիւղային կենաց ունե-

¹ Տես Հտ. ԺԳ, եր. 110. Հտ. ԺԵ, 114, 146, 179 :